# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,*
*Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)*


***թիվ 278-19***
***08 ապրիլի, 2019թ.***

*Հայաստանի Հանրապետության*
*Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին*

Հարգելի պարոն Ղուկասյան

Լոռու մարզի, Օձուն համայնքի, Մղարթ գյուղի, 8 փողոց, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1197 թ. «Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ նախկին Մղարթ համայնքին փոխանցվել է որպես <<Պետական բնակելի և ոչ բնակելի ֆոնդ>>: Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29 – ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մղարթ գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու եվ Մղարթ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1028-Ն որոշմամբ 06-078-0029-0010 կադաստրային ծածկագրով 0,04366 հա մակերեսով հողամասը, որի վրա գտնվում է <<Մղարթի ուսուցչի տունը>>, հաստատված է որպես պետական սեփականության հող: Նշված երկու որոշումների մեջ առկա է հակասություն, ինչի պատճառով <<Մղարթի ուսուցչի տունը>> Օձուն համայնքի ամվամբ սեփականության իրավունքի գրանցումը չի կարող իրականացվել:

Վերոհիշյալից ելնելով առաջարկում եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29 – ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մղարթ գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու եվ Մղարթ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1028-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և

06-078-0029-0010 կադաստրային ծածկագրով 0,04366 հա մակերեսով հողամասը Օձուն համայնքի Մղարթ գյուղին փոխանցել որպես համայնքային սեփականություն:

Միաժամանակ հայտնում ենք Ձեզ, որ վերոնշյալ շինությունը համաձայն Օձունի համայնքապետարանի աշխատակազմ, համայնքային կառավարչական հիմնարկի հաշվապահական 01 հաշվի նույնպես հանդիսանում է Օձուն համայնքային սեփականություն:

Կից ներկայացնում ենք հողամասի և շինության հատակագիծ:

***Հարգանքով՝***

***Օձուն համայնքի ղեկավար*** ***Ա. Տիգրանյան***

Կատարող՝ Հ.Գալստյան
հեռ. +37477566724